«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| | |
|---|---|
| ԹԵՄԱ | Աշակերտների դաստիարակության հիմնական առանձնահատկությունները |
| ԱՌԱՐԿԱ | Ռուսաց լեզու |
| ՀԵՂԻՆԱԿ | Մանյա Մարկոսյան |
| ՄԱՐԶ | Կոտայք |
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ | Քաղսիի միջնակարգ դպրոց |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն …… 3

Դաստիարակությունը, որպես մանկավարժության առարկա …… 4

I-IV դասարանների աշակերտների դաստիարակության հիմնական առանձնահատկությունները ……..……7

V-IX դասարանների աշակերտների դաստիարակության հիմնական առանձնահատկությունները …… 10

X- XII դասարանների աշակերտների դաստիարակության հիմնական առանձնահատկությունները …… 13

Եզրակացություն …….. 16

Օգտագործված գրականության ցանկ …… 17

# Ներածություն

Դաստիարակությունը ավագ սերունդների կողմից նոր սերունդներին հասարակական- պատմական փորձի փոխանցման պրոցեսն է նրանց կյանքի ու աշխատանքի նախապատրաստելու նպատակով, որն անհրաժեշտ է հասարակության հետագա զարգացումն ապահովելու համար:

Դպրոցական շրջանը իր բազմազանությամբ մարդկային անհատականության ձևավորման, մարդու դաստիարակության ամենադժվար ու պատասխանատու ժամանակահատվածն է: Անվիճելի է, որ դպրոցում ստացած գիտելիքների վրա է ստեղծվում աշակերտների համոզմունքը, ձևավորվում նրանց հայացքները:

Տարիների փորձը վկայում է այն մասին, որ այն դպրոցներում, որտեղ հաջողությամբ են հաղթահարվում դաստիարակչական պրոցեսի ընթացքում առաջացած հակասություններն ու թերությունները, հիմնականում ձևավորվում է կյանքի, աշխատանքի և հասարակության համար բազմակողմանիորեն զարգացած անձնավորություն:

Այս հետազոտական աշխատանքի **խնդիրն է** ուսումնասիրել տարբեր դասարանների աշակերտների դաստիարակության առանձնահատկությունները, ծրագրել գործունեության և պարապմունքի մոտավոր ձևեր, որոնք կնպաստեն ուսուցման և դաստիարակության որակի բարձրացմանը:

Հետազոտական աշխատանքի **նպատակն է** բարձրացնել դպրոցներում բազմակողմանի զարգացած և ճիշտ դաստիարակված աշակերտներ, կատարելագործել ուսումնադաստիարակչական աշխատանքները այնպես, որ յուրաքանչյուր աշակերտ դպրոցը ավարտի կայուն և խորը գիտելիքներով, բարոյաքաղաքական ամուր համոզմունքներով, հայրենիքի համար մինչև վերջ պայքարելու պատրաստակամությամբ:

# Դաստիարակությունը, որպես մանկավարժության առարկա

Մանկավարժությունը կարելի է անվանել գիտություն դաստիարակության մասին: Դաստիարակության պրոցեսում աճող սերունդները պետք է յուրացնեն այն, ինչ արդեն կուտակվել է հասարակության կողմից, այսինքն՝ յուրացնեն իրենց զարգացման մակարդակին հասցված գիտելիքները, տիրապետեն որոշակի աշխատանքային կարողությունների, յուրացնեն հասարակության վարքի նորմերն ու փորձը և մշակեն կյանքի մասին հայացքների որոշակի համակարգ: Դաստիարակության պրոցեսում պետք է ձևավորոեն նաև այնպիսի որակներ, որոնք անհրաժեշտ են նոր խնդիրների լուծման համար, որոնք կանգնած չէին ավագ սերունդների առաջ: Իսկ դրա համար պետք է մշակվեն կարողություններ՝ անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու, կյանքի ու աշխատանքի փոփոխված պայմաններին հարմարվելու, ստեղծագործական գործունեությամբ զբաղվելու համար:

Դաստիարակությունը ավագ սերունդների կողմից նոր սերունդներին հասարակական-պատմական փորձի փոխանցման պրոցեսն է նրանց կյանքի ու աշխատանքի նախապատրաստելու նպատակով, որն անհրաժեշտ է հասարակության հետագա զարգացումն ապահովելու համար:

Մարդու դաստիարակությունը մանկավարժական լայն իմաստով նպատակաուղղված պրոցես է , որն իրականացվում է հասարակության կողմից հատուկ կերպով առանձնացված մարդկանց՝ ուսուցիչների, մանկավարժների, դաստիարակների ղեկավարությամբ և իր մեջ ընդգրկում է ուսումնական և արտաուսումնական աշխատանքի բոլոր տեսակները, հատուկ ձևով անցկացվող դաստիարակչական աշխատանքը:

Դաստիարակությունը փոխադարձ կապի մեջ է գիտության հետ:

Դաստիարակության և գիտության փոխադարձ կապը պայմանավորված է նրանով, որ և դաստիարակությունը, և գիտությունը մտնում են հասարակական կյանքի հոգևոր ոլորտի մեջ որպես այդ ոլորտի հիմնական բնագավառներ: Չնայած այդ իրողությանը, գրականության մեջ երբեմն դրսևորվում է այն պատկերացումը, որ իբրև թե դաստիարակությունը չի կարող դիտվել որպես հասարակության հոգևոր կյանքի ինքնուրույն բնագավառ, որովհետև անմիջականորեն չի արտադրում հոգևոր արժեքներ: Արտաքուստ այդպիսի պատկերացումը թվում է ճիշտ, այնինչ, ըստ էության, դա ձևական մոտեցման արդյունք է, քանի որ դաստիարակության շնորհիվ են ձևավորվում հասարակական կյանքի սուբյեկտի՝ մարդու հոգևոր ուժերը, որն ստեղծում է հոգևոր արժեքներ:

Այսպիսով դաստիարակության (ներառյալ կրթության) շնորհիվ նորանոր կադրեր են պատրաստվում գիտության համար, առանց որի անհնարին կլինի ապահովել գիտական ճանաչողության հետագա զարգացումը: Մեծ է նրա դերը նաև գիտության նվաճումների լայն տարածման ու կիրառման և այդ միջոցով հասրակական գիտակցակցության զարգացման գործում: Ինչքան բարձր է դաստիարակության, կրթության մակարդակը, այնքան բարձր է դրանց գործուն դերը գիտության զարգացման բնագավառում: Այդ պատճառով ուսուցումը հատուկ տեղ է գրավում գիտության մեջ: Նա հանդիսանում է գիտության վերարտադրման և նրա ձեռք բերած սերնդից սերունդ հաղորդելու հիմնական եղանակը:

Գիտությունը իր հերթին մեծ դեր է խաղում դաստիարակության զարգացման գործում: Այդ դերն արտահայտվում է երկու կերպ: Մեկը գիտության նվաճումների և ճանաչողական արժեքների ներթափանցումն է կամ արտացոլումը դաստիարակության, հատկապես ուսուցման մեջ: Այդ հիման վրա տեղի է ունենում ուսումնադաստիարակչական պրոցեսի բովանդակության հարստացում և մեթոդների կատարելագործում: Մյուսը մարդու դաստիարակության մասին գիտությունների զարգացումն է:

Դաստիարակությունը մարդու անձի զարգացման ու ձևավորման վրա ազդեցության տեսակետից միշտ նպատակաուղղված է: Դա առաջին հերթին հասարակության նպատակաուղղված գործունեությունն է , որի իրականացման համար նա օգտագործում է իր ձեռքի տակ եղած բոլոր միջոցները՝ արվեստը, գրականությունը, ինֆորմացիայի տարածման զանգվածային միջոցները,

մշակույթի հիմնարկները, ուսումնական հաստատությունները, հասարակական կազմակերպությունները: Դաստիարակությունը ենթադրում է մարդուն զինել որոշակի քանակությամբ հասարակայնորեն անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գումարով, նրան պատրաստել կյանքին և աշխատանքին հասարակության մեջ, այդ հասարակության մեջ վարքի նորմերի ու կանոնների պահպանմանը, մարդկանց հետ հաղորդակցմանը: Այլ կերպ դաստիարակությունը պետք է ապահովի մարդու այնպիսի վարքը, որը համապատասխանի տվյալ հասարակության կողմից ընդունված վարքի նորմերին ու կանոններին: Դա, բնականաբար, չի բացառում անձի անհատական գծերի և որակների ձևավորումը, որոնց զարգացումը պայմանավորված է ինչպես մարդու անհատական նախադրյալներով, այնպես էլ այն պայմաններով, որոնք կարող է տրամադրել նրան հասարակությունը՝ այդ նախադրյալների զարգացման համար:

Այսպիսով դաստիարակությունը չափազանց կարևոր գործոն է, որը մեծ ազդեցություն է ունենում մարդու անձի ձևավորման ու զարգացման վրա:

Ուստի այս աշխատանքի մեջ բնութագրվում են I-IV, V-IX, X-XII դասարանների աշակերտների դաստիարակության առանձնահատկությունները, կոնկրետացվում են դպրոցականների տարիքային առանձնահատկություններին համապատասխան դաստիարակության ընդհանուր խնդիրները, հանձնարարվում են գործունեության և պարապմունքի մոտավոր ձևերը, որոնք նպաստում են դաստիարակչական խնդիրների իրականացմանը: Այդպիսի ձևեր են ուսումնական, աշխատանքային, հանրօգուտ գործունեությունը և այլն: Աշակերտների գործունեության և պարապմունքի բոլոր ձևերը կառուցվում են՝ հաշվի առնելով դաստիարակչական այն աշխատանքը, որն ուսուցիչների կողմից առաջին հերթին իրականացվում է դասերի ընթացքում :

## I-IV դասարանների աշակերտների դաստիարակության հիմնական առանձնահատկությունները:

Դպրոց ընդունվելը կարևոր և պատասխանատու իրադարձություն է երեխայի կյանքում, որը խոր հետք է թողնում նրա զարգացման և դաստիարակության վրա:

Երեխայի գործունեության հիմնական ձևերից մեկը դառնում է ուսուցումը, որը նրանից պահանջում է համբերություն, կազմակերպվածություն, ինքնուրույնություն և կարգապահություն:

Դպրոց փոխադրվելը բարդ է նախադպրոցականի համար: Ուսումնական գործունեության մեջ ընդգրկվելը և կյանքի նոր ռեժիմի մեջ մտնելը դպրոց գնալու լավ նախապատրաստված երեխայի համար անգամ հեշտ չէ:

Երեխաների նկատմաբ մանկավարժական մոտեցման հատուկ հոգս է ներկայացնում առաջին դասարանը:

Առաջին դասարանցիները աչքի են ընկնում մեծ հուզականությամբ և դյուրազգացությամբ: Ուստի՝ կարևոր է նրանց մեջ հետաքրքրություն առաջացնել ուսուցման պրոցեսի և արտաուսումնական տպավորիչ, հրապուրիչ համատեղ պարապմունքների նկատմամբ: Իր ցանկությամբ դպրոց եկած վեցամյա երեխան, սովորաբար, հեշտ է ենթարկվում դաստիարակչական ազդեցության : Նա ուզում է դառնալ լավ աշակերտ: Առաջին դասարանցիներն արդեն ունեն բարոյականության որոշակի փորձ: Նրանք, ովքեր մանկապարտեզ են հաճախել, որպես կանոն, ավելի մարդամոտ են, հեշտ են շփման մեջ մտնում ուսուցչի հետ, կարողանում են պահպանել սանիտարահիգիենիկ կանոնները, առանց ծնողների չեն վախենում մնալ դպրոցում: Բայց այդ երեխաները, որպես կանոն, նաև դյուրազգաց են , նրանք սովոր են մանկապարտեզին բնորոշ վարքի ոճին, որտեղ սեփական ցանկությամբ ուզած ժամանակ կարող էին իրենց համար խաղ ընտրել, մի խաղից անցնել մյուսին, մի խմբից՝ մյուսը: Նրանք դժվարությամբ էին կենտրոնանում մի որևէ զբաղմունքի վրա անգամ համեմատաբար կարճ ժամանակի ընթացքում:

Դպրոցականի դաստիարակությունը տեղի է ունենում ամենօրյա կյանքի և գործունեության ընթացքում՝ ուսման ընթացքում, աշխատանքում, հասարակական գործերում, խաղերում և զանազան պարապմունքներում, որտեղ նա ընտելանում է ղեկավարվել բարոյական նորմաներով ու կանոններով և որտեղ ինքը կարող է համոզվել դրանց անհրաժեշտության մեջ:

Այս պայմաններում ուսուցիչը, հենվելով երեխաների արդեն ձեռք բերած կենսափորձի վրա, նրանց աստիճանաբար ընտելացնում է դպրոցական կանոններում գրված նոր պահանջներին: Դրան նպաստում են նաև դիդակտիկակական խաղեր մտցնելը, դասի ժամանակ աշակերտների աշխատանքի տարբեր տեսակները հաջորդաբար փոփոխելը, կամային ուշադրություն դաստիարակելու հատուկ վարժություններ կատարելը, երեխաներին՝ ավելի տևական սիստեմատիկ պարապմունքներին աստիճանաբար վարժեցնելը, որոնց ժամանակ չի կարելի շեղվել, խոսել ընկերների հետ, այլ պետք է ուշադրությամբ լսել ուսուցչին և ճշտությամբ կատարել նրա պահանջները:

Վարքի անկայունությունը հաճախ բարդացնում է դաստիարակչական աշխատանքը կրտսեր դպրոցականների հետ: Երեխաների ուրախության և անհաջողության ապրումները բուռն կերպով են ընթանում: Եթե ուսուցչի կողմից անհաջողությունը ընդգծվում է բոլորի ներկայությամբ, ապա երեխաները հաճախ կորցնում են վստահությունը իրենց նկատմամբ և հետաքրքրությունը ուսման և դասարանի գործերի նկատմամբ: Ընդհակառակն, տեղին և ժամանակին կրտսեր դպրոցականներին խրախուսելը, սովորաբար, բարերար ազդեցություն է գործում նրանց հուզական ինքնազգացման վրա, նպաստում նրանց ուսումնական հաջողություններին և դաստիարակմանը:

Կրտսեր դպրոցականը աչքի է ընկնում ուշադրության անկայունությամբ, տրամադրության արագ փոփոխությամբ, արագ հոգնածությամբ: Ուստի ուսումնական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքի ծավալաչափի, երեխաների մեջ դրական տրամադրությունը պահպանելու, միևնույն ուսումնական նյութի ուսումնասիրման ժամանակ պարապմունքների

ձևերի ու տեսակների բազմազանության, երեխաներին առավել նպատակահարմար ռեժիմին հաղորդակից դարձնելու և հանգստի ժամանակը ռացիոնալ կերպով օգտագործելու մասին ուսուցչի հոգատարությունը պետք է նրա համար դառնա առաջնայինը:

Տարրական դասարանի դպրոցականը մեծ վստահություն ունի ուսուցչի, նրա խոսքի, վարմունքի, գնահատականի նկատմամբ: Երեխաներն ուշադրությամբ հետևում են ուսուցչին, նրա գործողություններին և հարաբերություններին: Երեխաների այդ դիտումները կուտակվում են, դրանց հետ միասին ձևավորվում են նրանց պատկերացումները արդարացիության, մարկայնության մասին, մարկանց փոխհարաբերությունների չափանիշի մասին: Այդ պատճառով կարևոր է, թե բարոյական ինչպիսի հարաբերություններ են ստեղծվում ուսուցչի և աշակերտների միջև դպրոցական կյանքում՝ դասերին, արտադասարանական պարապմունքներին:

Դաստիարակությունը ուշադրուություն է պահանջում առանց բացառության յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ: Այն ենթադրում է հարգանք դպրոցականի անձնական արժանապատվության նկատմամբ: Գլխավորը պետք է լինի աշակերտի արարքների գնահատականը(<< Դու վատ վարվեցիր>> կամ <<Դու լավ վարվեցիր>>), բայց դա չպետք է դառնա աշակերտի անձնավորության ընդհանուր գնահատականը (<<Դու վատն ես>> կամ <<Դու լավն ես>>):

Յուրաքանչյուր աշակերտի մեջ կարելի է գտնել նրա ուժեղ, դրական կողմը, որի վրա հենվելով կարելի է հեշտությամբ յուրաքանչյուր երեխայի հավատն ամրապնդել իր ուշերի ու հնարավորությունների նկատմամբ: Դա կարող է լինել ճշտապահություն կամ ճարպկություն, մարդամոտություն կամ որևէ բան պատրաստելու կարողություն:

Ուսուցիչը պետք է միշտ հիշի, որ տարրական դասարաններում աշակերտների և իր փոխհարաբերությունների ոճը որոշում է աշակերտների փոխհարաբերությունների բնույթը:

## V-IX դասարանների աշակերտների դաստիարակության հիմնական առանձնահատկությունները:

Դեռահաս տարիքը ընդունված է անվանել երեխայի զարգացման անցման շրջան: Այդ ժամանակը հատկանշական է երեխաների ֆիզիկական և հոգևոր ուժի ինտենսիվ զարգացմամբ:

Հատկապես զգալի են անատոմաֆիզիոլոգիական փոփոխությունները՝ թռիչք ֆիզիոլոգիական զարգացման մեջ, սեռական հասունացում, օրգանիզմի արագ աճ, մանկական մարմնի համակարգի և օրգանների մեծ մասի կտրուկ վերակառուցում: Ֆիզիկական բուռն աճը և սեռական հասունացումը բարձրացնում են կենտրոնական նյարդային համակարգի գրգռականությունը, ազդում են դեռահասների հոգեկան վիճակի վրա, որը, բնականաբար, չի կարող ամբողջությամբ չանդրադառնալ նրանց կենսագործունեության ու վարքի ընդհանուր պատկերի վրա:

Այս տարիքի աշակերտի նոր դիրքը դպրոցում և ընտանիքում, կրտսեր տարիքի համեմատությամբ, որոշվում է ամենից առաջ նրա աճած հնարավորություններով: Դեռահասն արդեն երեխա չէ, նա ունի ավելի շատ իրավունքներ ու պարտականություններ, ավելի է բարդանում նրա գործունեությունը: Դպրոցում նրան ներկայացվում են ավելի բարձր պահանջներ: Դպրոցական ծրագրերի յուրացման համար նրան անհրաժեշտ է կամքի, ինքնուրույնության ոչ քիչ լարում: Բարդանում են դեռահասի հարաբերությունները մանկավարժների և համադասարանցիների հետ: Ընտանիքի կյանքում դեռահասներն արդեն զգալի չափով օգտվում են չափահասների իրավունքներից: Նրանք հոգատարություն են ցուցաբերում մերձավորների բարեհաջողության մասին, պատասխանատվությամբ են վերաբերվում տնային գործերին, մեծ օգնություն են ցույց տալիս մեծերին: Այս տարիքի երեխաներին վստահում են, նրանց գործողություններից շատը չի վերահսկվում: Ընտանիքի չափահաս անդամներն արդեն ավելի շատ են հաշվի առնում նրանց կարծիքը:

Բայց միաժամանակ դեռահասը դեռ չափահաս չէ, շատ բան նրա համար անմատչելի է: Անձնական կենսափորձի պակասը, վարքի անկայունությունը հաճախ պատճառ են դառնում, որ չափահասներն ակտիվ միջամտեն նրա կյանքի կարգ ու կանոնին: Նրանք վերահսկում են նրա ազատ ժամանակի կազմակերպումը և օգտագործումը՝ հանգիստը, գրքերի ընթերցումը, զանազան խմբակների հաճախումը և այլն:

Ինքնագիտակցման զարգացումը և <<չափահասության>> զգացումը դեռահաս տարիքին բնորոշ առանձնահատկություններ են, որոնց հետ կապված է հոգեբանական այլ առանձնահատկությունների ձևավորումը: Չափից դուրս ձգտումը դեպի ինքնուրույնությունն ու մեծերի անկախությունը՝ հաշվի չառնելով եղած հնարավորությունները, դեռահասի զարգացման մեջ երբեմն կարող են առաջացնել ներքին հակասություններ: Այդ տարիքում աշակերտների նկատվող կամակորությունը, կոպտությունը և սուր խոսքերը, ավելորդ դյուրագրությունը և ջղայնությունը հաճախ պայմանավորված են նրանց զարգացման տարիքային առանձնահատկությունները ուսուցչի կողմից անըմբռնողությամբ, նրանց նկատմամբ սխալ մոտեցմամբ, կրտսեր տարիքում դաստիարակության սխալներով:

Այս տարիքի աշակերտները ձեռք են բերել հասարակական- քաղաքական բնույթի գիտելիքների որոշ պաշար, ունեն դասարանում աշխատանքի փորձ, դառնում են ավելի վստահ և ավելի ինքնուրույն: Նրանց մեջ սկսում են առաջանալ ինքնավերլուծման և ինքնագնահատման հակում, մեծերի ու ընկերների վարքը վերլուծելու, որպես անձնավորություն ձևավորելու ձգտում: Նրանց սկսում է հուզել այն դերը, որը նրանց տրվում է դասարանում, հասարակական կարծիքը, ընկերների վերաբերմունքը: Նրանց անձնական փոխհարաբերությունները դառնում են ավելի տարբերակված, երևան են գալիս ընկերների նկատմամբ անհատական վերաբերմունք, ընկեր գտնելու ձգտում:

Ուստի շատ կարևոր է հասնել համերաշխ ու միաձույլ մանկական կոլեկտիվի ստեղծման, որտեղ ընկերների գնահատականը, նրանց կարծիքը աստիճանաբար դառնում են դպրոցականի վարքի կարևոր դրդապատճառներ:

Այս տարիքը դպրոցականների տարիքային զարգացման առավել բարդ և պատասխանատու շրջաններից մեկն է, երբ առանձնապես ինտենսիվ կերպով է ձևավորվում երեխայի ինքնագիտակցությունը, նրա ինտելեկտը, մեծանում է հարցասիրությունը, ընդլայնվում են մտահորիզոնը և փորձը:

Այդ շրջանի առանձնահատկությունը երեխաների մեջ շրջապատի կյանքի մարդկանց հասկանալու և գնահատելու, իր գործողություններն ըմբռնելու, իր անձնավորության նկատմամբ հետաքրքրություն հանդես բերելու առաջացող ձգտումն է: Սեփական կյանքի ու գործունեության կոնկրետ փաստերի դիտումների, իր արարքների մասին խորհելու, մեծերի ու հասակակիցների հետ հարաբերությունների վերլուծման հիման վրա, ընկերների հետ իրեն համեմատելու և շրջապատողների կարծիքը հաշվի առնելու հետևանքով դեռահասի մեջ պատկերացում է ստեղծվում հենց իր մասին:

Այս տարիքի աշակերտի համար առանձնահատուկ ուշադրություն են ստանում նրա փոխհարաբերություններն ընկերների հետ, ինչպես նաև նրա դիրքը դասարանում: Ընկերների շրջապատում ցանկալի տեղ գրավելու համար դեռահասներն երբեմն կարող են դրսևորել նեգատիվիզմ, դառնալ ինքնակամ, կամակոր և կռվարար: Անհրաժեշտ է օգնել, որ նրանք դասարանում ինքնահաստատման ճիշտ ձևեր գտնեն՝ իրենց համար հետաքրքիր, ուրիշների համար օգտակար գործունեության հիման վրա:

Այդ տարիքի դպրոցականները սովորում են ինքնուրույն և պատասխանատվությամբ վերաբերվել հանձնարարված գործին, ցանկանում են լինել ոչ միայն դասարանի մասնակիցներ, այլև կազմակերպիչներ, ձգտում են աշխատել չափահասների հետ միասին: Աշակերտների բնավորության ձևավորման գործում մեծ նշանակություն ունի այն, ինչ անում են մեծերը և ուսուցիչները, ինչպես են նրանք իրենց պահում, ինչ են նրանք խոսում, ինչ են սովորեցնում:

## X- XII դասարանների աշակերտների դաստիարակության հիմնական առանձնահատկությունները:

X-XII դասարանների աշակերտները ավագ դեռահասներ են: Միջին դասարանի աշակերտներից նրանք տարբերվում են ֆիզիկական և հոգեբանական զարգացման ավելի բարձր մակարդակով: Էական փոփոխություններ են տեղի ունենում ավագ դեռահասների ներաշխարհում և կյանքի պայմաններում:

Այդ հասակում բավականաչափ լիակատարությամբ են արտահայտվում դպրոցականի զարգացման առանձնահատկությունները, որոնց սկիզբը դրվել էր դեռևս կրտսեր և միջին դեռահաս տարիքում՝ ինքնագիտակցության ձևավորում, հասարակական պահանջների նկատմամբ պատասխանատու վերաբերմունք, շրջապատի մարդկանց մեջ իր տեղը որոշելու ձգտում:

Այս տարիքին բնորոշ գիծն է շրջապատի մարդկանց բարոյական հատկությունների էության և բնավորության գծերի ավելի խորացված ըմբռնումը, քան ցածր դասարաններում, ինչպես նաև իր անձնավորության հատկությունների ինտենսիվ գիտակցումն ու ինքնադաստիարակման պահանջմունքը: Այդ պատճառով մանկավարժներն ակտիվացնում են աշակերտների կողմից բարոյական տիպարների որոնումները, նրանց իդեալների ձևավորման պրոցեսը: Դեռահասներին դա բարձրացնում է ինքնադաստիարակման ավելի բարձր աստիճանի և ստեղծում է նրանց դաստիարակության ու զարգացման նոր բարենպաստ պայմաններ:

Ուսուցիչը հաշվի է առնում , որ բարձր դասարաններում դպրոցականի մեջ հաճախ արդեն առաջանում են բավականին կայուն ուսումնական հետաքրքրություններ ու հակումներ, երևան է գալիս սիրելի առարկայից գիտելիքները հարստացնելու և խորացնելու ձգտում, որոշակի են դառնում գիտության, գրականության, տեխնիկայի արվեստի տարբեր բնագավառների նկատմամբ նրա հետաքրքրությունները:

Աշակերտները լրջորեն մտածում են մասնագիտության ընտրության մասին, ուստի նրանց ուսումնական հետաքրքրությունները շարունակում են տարբերակվել: Սակայն հաճախ աշակերտների հետաքրքրությունները կախված են լինում պատահական հանգամանքներից՝ ընթերցած գրքից, դիտած ֆիլմից, նույնիսկ տվյալ առարկայից ստացաց գնահատականից: Դա ուսուցչին պարտավորեցնում է սիստեմատիկաբար զարգացնելու նրանց հետաքրքրություններն ու հակումները: Մեծերի ուշադրության բացակայության պայմաններում երեխաների հետաքրքրությունները մնում են անկայուն կամ ստանում միակողմանի հրապուրանքներրի բնույթ, որոնք, սովորաբար, խանգարում են դպրոցականի ներդաշնակ զարգացմանը:

Աշակերտները, սովորանար, արդեն ծանոթ են մտավոր աշխատանքի ռացիոնալ եղանակներին, բայց միշտ չէ, որ օգտվում են դրանցից: Նույնը կարելի է ասել նաև ռեժիմի նկատմամբ նրանց վերաբերմունքի, ժամանակը պլանավորելու և ռացիոնալ օգտագործելու կարողության մասին: Այդ տարիքի աշակերտների ռեժիմի ճիշտ կազմակերպման պայմաններից մեկը դպրոցի և ընտանիքի ընդհանուր ռեժիմի հետ նրա համաձայնեցվածությունն է: Աշակերտների տարիքի ավելանալուն համեմատ նրանց ռեժիմը աստիճանաբար մոտենում է չափահասների ռեժիմին:

Սեռական հասունության կապակցությամբ դեռահասների կյանքում սկսում է նկատելի դեր խաղալ տղաների և աղջիկների փոխադարձ հետաքրքրությունները: Սիրահարվածության առաջին ապրումներն իրենց հետքն են թողնում նրանց վարքի վրա: Կարևոր է, որ ուսուցիչը հաշվի առնի այդ առանձնահատկությունը և պայմաններ ստեղծի բարեկամության ու սիրո, տղաների և աղջիկների միջև նորմալ փոխհարաբերություններ ստեղծելու մասին դպրոցականների մեջ բարոյական վեհ պատկերացումներ ձևավորելու համար: Բարձր դասարանի ուսուցիչը պետք է միշտ ուշադրություն դարձնի այս կարևոր հարցին և զգույշ ու մտածված աշխատանք կազմակերպի, երբեք չվիրավորելով պատանիների ու աղջիկների ինքնասիրությունը:

Դասղեկը պետք է հաճախակի կազմակերպի դասարանական և անհատական զրույցներ՝ նվիրված սիրո և ընտանիքի պրոբլեմներին, աղջկա ու տղայի փոխհարաբերությանը, առողջական և սանհիգիենիկ հարցերին:
Իհարկե, աճող սերնդի ձևավորման գործում հսկայական դեր է խաղում նաև ընտանիքը, շրջապատը, առօրյա կյանքը, բնությունը:

Այս տարիքի աշակերտին հատկապես անհրաժեշտ են ուսուցիչների զգայուն վերաբերմունքը, ըմբռնումն ու աջակցությունը: Պետք չէ նրանց ուշադրությունը կենտրոնացնել հատկապես այն փոփոխությունների վրա, որոնք կատարվում են նրանց օրգանիզմում և հոգեկանում, բայց անհրաժեշտ է ճիշտ բացատրել այդ երևույթների օրինաչափությունը և նրանց կենսաբանական նշանակությունը: Այդ տարիքի համար հատկապես կարևոր է սանիտարահիգիենիկ լուսավորությոունը:

Բարձր դասարանցու հոգևոր ու ֆիզիկական ներդաշնակ զարգացման գործում առանձնակի տեղ ունի դասղեկի անձնավորությունը, որից էլ մեծապես կախված է դասարանի դաստիարակչական աշխատանքի հաջողությունը:

Յուրաքանչյուր դասղեկ պարտավոր է լինել բազմակողմանի զարգացած և բարձր էրուդիցիայի տեր անձնավորություն: Նա պետք է տեղյակ լինի կյանքի, գիտության ու արվեստի նորություններին և ժամանակի շնչով համակի իր սաներին:

Բարձր դասարանցիներին ճիշտ դաստիարակելու համար պետք՝ նրանց լավ ճանաչել, իսկ լավ ճանաչելու համար պետք է լավ իմանալ նրանց տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:

Պատանիներն ու աղջիկները 16-17 տարեկան հասակում ապրում են ֆիզիկական հասունության շրջան, լրջորեն մտածում ապագայի մասին: Այդ այն տարիքն է, երբ առավել արդյունավետ է ձևավորվում մարդու աշխարհայացքը, աճում է նրա ինքնագիտակցությունը, ամրապնդվում բնավորությունը:

# Եզրակացություն

Ուսումնասիրելով տարբեր դասարանների աշակերտների դաստիարակության առանձնահատկությունները եզրակացնում ենք, որ դաստիարակչական աշխատանքների հաջողության գրավականը համախմբված դասարան է: Լավ կազմակերպված ու համախմբված դասարանում զարգանում են աշակերտների ստեղծագործական նախաձեռնությունները, ամրապնդվում բարեկամական և ընկերական կապերը:

Դասարանի առողջ հասարակական կարծիքը, ընկերական անկեղծ քննադատությունը և ինքնաքննադատությունը նպաստում են աշակերտների հասարակական ակտիվության զարգացմանը և նրանց մեջ բարոյական արժեքավոր հատկությունների ձևավորմանը:

Աշակերտների տարբեր բնավորությունները, ընդունակությունները, հետաքրքրությունները, հակումները միաձույլ դասարանում լրացնում են միմյանց, նրանց ապրումները դառնում են ավելի ցայտուն, արարքներն՝ ավելի պատասխանատու, մտքերն՝ ավելի խոր:

Գաղտնիք չէ, որ աշակերտներն ըստ իրենց ընդունակությունների , բնավորության գծերի, հետաքրքրությունների և հակումների միատեսակ չեն լինում: Ոմանք ավելի վճռական են, համարձակ, նախաձեռնող, ոմանք քաշվող, պասսիվ, ամոթխած: Ոմանք սիրում են հասարակական աշխատանքը, աչքի են ընկնում կազմակերպվածությամբ, աշխատասիրությամբ, իսկ մյուսները՝ հակառակը: Այնպես որ, աշակերտները, լինելով նույն դասարանի, նույն կոլեկտիվի անդամներ, այնուամենայնիվ, իրենց բնավորությամբ, հետաքրքրությամբ, տրամադրություններով, ցանկություններով, կարողություններով տարբերվում են միմյանցից: Հետևաբար, աշակերտների նկատմամբ ինչքան էլ պահանջները լինեն միասնական, մոտեցումը պետք է լինի անհատական: Բոլորին նույն մեթոդներով ու միջոցներով հնարավոր չէ դաստիարակել: Մեկի վրա դրական ազդեցություն կարող է ունենալ խրախուսանքը, մյուսին՝ համոզելը, երրորդին՝ քաջալերումը և այլն:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Յու. Կ. Բաբանսկի <<Մանկավարժություն>>, Երևան, 1986
2. Ի. Ս. Մարիենկո <<Դպրոցականների դաստիարակության բովանդակությունը>>, Երևան, 1978
3. Ս.Ա. Մովսիսյան <<Գիտելիքների միավորումը մանկավարժության մեջ>>, Երևան, 1983
4. Կ. Շ. Ավագյան <<Բարձր դասարանցիների դաստիարակության ձևերն ու մեթոդները>>, Երևան, 1980
5. Մ. Մկրտչյան <<Մանկավարժություն>>, Երևան, 2008
6. Ա. Ս. Մանուկյան <<Խոսքի զարգացման մեթոդիկա>>, Երևան, 1976
7. Ս. Բաբաջանյան <<Միջնակարգ կրթությունը Հայաստանում>>, Երևան, 2003